ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2010 թվականի մայիսի 21)

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

հիմք ընդունելով «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրը,

ճանաչելով մաքսատուրքերի հաշվարկման եւ վճարման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն վարելու նպատակահարմարությունը,

ցանկանալով այդ նպատակով աջակցել միմյանց,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրով սահմանվում են մաքսատուրքերի վճարման ժամկետների փոփոխման հիմքերը, պայմանները եւ կարգը:

Հոդված 2

Մաքսատուրքերի վճարման ժամկետի փոփոխությունը կատարվում է հետաձգման կամ տարաժամկետ (մաս առ մաս) վճարման ձեւով:

Սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում մաքսատուրքերի վճարումը հետաձգելը կամ տարաժամկետ կատարելը համարվում է մաքսատուրքերի վճարման ժամկետի փոփոխություն՝

համապատասխանաբար վճարողի կողմից հետաձգված (տարաժամկետ վճարված) գումարի փուլ առ փուլ կամ միանվագ վճարմամբ:

Մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորությունը կարող է ընձեռվել վճարման ենթակա ամբողջ գումարի կամ դրա մի մասի համար:

Հոդված 3

Մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորությունն ընձեռվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքի 12–րդ գլխով նախատեսված կարգով՝ մաքսատուրքերի վճարումն ապահովելու պայմանով:

Հոդված 4

1. Մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու մասին որոշումը կայացվում է վճարողի գրավոր դիմումի հիման վրա՝

Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում՝ այն մաքսային մարմնի կողմից, որին ներկայացվում է մաքսային հայտարարագիրը,

Ռուսաստանի Դաշնությունում՝ Դաշնային մաքսային ծառայության կամ դրա կողմից սահմանվող մաքսային մարմնի կողմից:

2. Մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու մասին դիմումի մեջ նշվում են հետեւյալ տեղեկությունները՝

1) վճարողի մասին տեղեկությունները,

2) ապրանքների անվանումները,

3) արտաքին առեւտրային պայմանագրի (միջազգային պայմանագրի) վավերապայմանները,

4) վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու հիմքերը,

5) մաքսատուրքերի գումարը, որի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու դիմում է ներկայացվում,

6) վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու համար հայցվող ժամկետը,

7) այն մաքսատուրքերի գումարների փուլ առ փուլ վճարման ժամանակացույցը, որոնց մասով վճարումը տարաժամկետ կատարելու դիմում է ներկայացվում,

8) սույն Համաձայնագրի 8–րդ հոդվածում նշված այն հանգամանքների բացակայության մասին տեղեկությունները, որոնց առկայության դեպքում վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն չի ընձեռվում:

3. Դիմումի հետ մաքսային մարմին պետք է ներկայացվի սույն Համաձայնագրով նախատեսված մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու համար հիմքերի առկայությունը հաստատող փաստաթղթերը:

Հոդված 5

Մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու, կամ վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորության ընձեռումը մերժելու մասին որոշումը կայացվում է այդ մասին դիմում ներկայացնելու օրվանից տասն աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում:

Վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու, կամ այն մերժելու մասին որոշումը գրավոր ներկայացվում է դրա տրամադրման համար դիմում ներկայացրած անձին:

Վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու մասին որոշման մեջ նշվում են վճարողի մասին տեղեկությունները, մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու ժամկետը, մաքսատուրքի գումարը, որի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն է ընձեռվում, ինչպես նաեւ ապրանքները բաց թողնելու ժամանակ այս որոշումը կիրառելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Վճարումը տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու մասին մաքսային մարմնի որոշման մեջ նշվում է նաեւ մաքսատուրքերի գումարի փուլ առ փուլ վճարման ժամանակացույցը:

Վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորությունը մերժելու մասին որոշման մեջ նշվում են այդ մերժման պատճառները:

Մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու մասին մաքսային մարմնի որոշումը համարվում է իրավական նշանակություն ունեցող փաստերի մասին վկայող փաստաթուղթ, եթե այն ապրանքների մաքսային հայտարարագրումը, որոնց նկատմամբ նման որոշում է կայացվել, իրականացվում է որոշումը կայացնելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Հոդված 6

1. Մաքսատուրք վճարողին ընձեռվում է մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն, եթե առկա է հետեւյալ հիմքերից մեկը՝

1) տարերային աղետի, տեխնոլոգիական աղետի կամ անհաղթահարելի ուժի այլ հանգամանքների հետեւանքով անձին վնաս պատճառելու դեպքում,

2) մաքսատուրք վճարողին դաշնային (հանրապետական) բյուջեից ֆինանսավորումը կամ այդ անձի կողմից կատարված պետական պատվերի համար վարձատրությունն ուշացնելու դեպքում,

3) արագ փչացող ապրանքներ ներմուծելու դեպքում,

4) այն միջազգային պայմանագրերի շրջանակներում մատակարարումներ իրականացնելու դեպքում, որոնց կողմերից մեկը Մաքսային միության անդամ պետությունն է, եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված չէ, որ սույն հանգամանքը մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու համար հիմք չէ,

5) Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատված՝ ներմուծվող օտարերկրյա օդանավերի եւ դրանց լրամասերի առանձին տեսակների ցանկում ներառված այն ապրանքների ներմուծման դեպքում, որոնց մասով կարող է ընձեռվել մաքսատուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն,

6) գյուղատնտեսական գործունեություն կամ նշված կազմակերպությունների համար մատակարարումներ իրականացնող կազմակերպությունների կողմից տնկանյութի կամ սերմանյութի, բույսերի պաշտպանության միջոցների, Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 8424 81, 8433 51, 8433 59 ենթադիրքերում ընդգրկված գյուղատնտեսական տեխնիկայի, կենդանիների կերակրման համար նախատեսված ապրանքների ներմուծման դեպքում՝ բացառությամբ կատուների, շների եւ դեկորատիվ թռչունների,

7) ապրանքների, այդ թվում՝ հումքի, նյութերի, տեխնոլոգիական սարքավորումների, դրանց կոմպլեկտավորող տարրերի եւ պահեստամասերի ներմուծման դեպքում՝ արդյունաբերական վերամշակման ընթացքում դրանք օգտագործելու համար:

Սույն կետի առաջին մասի 7–րդ ենթակետում նշված ապրանքների ցանկը կարող է սահմանվել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

Սույն Համաձայնագրի նպատակների համար «արդյունաբերական վերամշակում» նշանակում է արտադրության մեջ ապրանքների օգտագործումը նոր ապրանքներ ստանալու համար, որոնց ծածկագիրը, Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի համաձայն, ցանկացած

առաջին չորս նիշերի մակարդակով տարբերվում է արդյունաբերական վերամշակման համար ներմուծվող ապրանքների ծածկագրից:

2. Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ կարող են սահմանվել Մաքսային միության անդամ պետության այն մարմինները, որոնք իրավասու են հաստատելու սույն հոդվածի 1–ին կետում նշված հիմքերը:

3. Մաքսային միության հանձնաժողովի կողմից կարող են մաքսատուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու համար սահմանվել այլ հիմքեր կամ կասեցվել սույն հոդվածի 1–ին կետում նշված՝ մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու համար առկա հիմքեր:

Հոդված 7

Մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորությունն ընձեռվում է այն ապրանքների համար, որոնք ձեւակերպվելու են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

Հոդված 8

Մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելու մասին որոշում չի կայացվում, եթե մաքսային մարմինը տեղեկություններ ունի այն մասին, որ վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու համար դիմած անձինք ունեն մաքսատուրքերի, հարկերի վճարման գծով պարտք, կամ նշված անձանց նկատմամբ հարուցված է սնանկության վարույթ կամ քրեական գործ՝ հանցագործության հատկանիշներով մաքսային օրենսդրության խախտման դեպքեր հայտնաբերելու համար, ինչպես նաեւ եթե վճարողը մաքսային մարմին չի ներկայացրել անհրաժեշտ տեղեկությունները եւ փաստաթղթերը:

Մինչեւ մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ընձեռելը մաքսային մարմնի կողմից նմանատիպ տեղեկություններ ստանալու դեպքում, վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու մասին որոշումը չեղյալ է հայտարարվում, որի մասին գրավոր տեղեկացվում է վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն ստանալու համար դիմում ներկայացրած անձը:

Հոդված 9

Մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորությունն ընձեռվում է վեց ամսից ոչ ավելի ժամկետով, իսկ սույն Համաձայնագրի 6–րդ հոդվածի 1–ին կետի 3–րդ ենթակետում նշված ապրանքների համար՝ երկու ամսից ոչ ավելի ժամկետով:

Հոդված 10

Մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու համար գանձվում են Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան հաշվարկվող տոկոսագումար այն մաքսատուրքերի գումարների նկատմամբ, որոնց վճարման ժամկետը փոփոխվել է՝ ապրանքների բացթողման օրվան հաջորդող օրվանից մինչեւ մաքսատուրքերի վճարման մասով պարտավորությունների դադարեցման օրն ընկած ժամանակահատվածի համար:

Տոկոսագումարները պետք է վճարվեն մաքսատուրքերի վճարման մասով պարտավորությունների դադարեցման օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ:

Տոկոսագումարների վճարումը, գանձումը եւ վերադարձն իրականացվում է մաքսատուրքերի վճարման, գանձման եւ վերադարձման նկատմամբ կիրառվող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքով նախատեսված կարգով:

Հոդված 11

Վեճերի կարգավորումը

1. Կողմերի միջեւ ծագող՝ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցությունների ու խորհրդակցությունների միջոցով:

2. Եթե վեճի կողմերը բանակցությունների ու խորհրդակցությունների միջոցով վեճը չեն կարգավորում դրանց անցկացման վերաբերյալ՝ վեճի մի կողմից վեճի մյուս կողմին հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումը ներկայացնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը, եթե վեճի կարգավորման եղանակների վերաբերյալ վեճի կողմերի միջեւ այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել:

3. Մաքսային միության հանձնաժողովը Կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

Հոդված 12

Փոփոխություններ կատարելը

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով:

Հոդված 13

Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման եւ ժամանակավորապես կիրառվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի մայիսի 21-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը յուրաքանչյուր Կողմին կտրամադրի դրա հաստատված պատճենը: